

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 40 ԿՖճ.  
Գաւառացի 2 Լիրա  
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 ԿՖճ.  
Գաւառացի 1 Լիրա  
Օտար երկիրներու 50 Գր.  
Ծանուցման տողը մէկ անգամի հա-  
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-  
մար 2 զուշ է. աւելի անգամներու  
համար զատ ստակարկութիւն կը-  
լայ :  
Իւրաքանչիւր թիւ 40 վարտ արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գնացած լրագրաց ճանրու-  
ած արքը Խորագրութեան վրայ է :  
Լրագրոյ վերաբերեալ նամակ  
կամ որ և ինչ գրութիւն Խորագրի  
—Տնօրէնին պիտի ուղղուի : Դաւա-  
թիս Սանտրքըրար Հաստէսի թիւ  
198 : Եօրօ խոն : Կապիսի գրասեն-  
եակը :  
Հանրու ճանրը վերաբոյ ած նա-  
մակ չընդունուի :  
Չտուած նամակի յորում, եւ  
եւ չեն արտօն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եզիպտոսի նոր խորվը՝ Թէվֆիդ-  
փաշան՝ Թայմիլ թղթակցին հետ տե-  
սակցելով իւր աշխարհավարութեան  
վրայ կարեւոր բացատրութիւններ ար-  
եւա : Իւր նոր անուանած նախա-  
րարներուն վրայ խօսելով՝ բնաւ թէ  
Եզիպտոսի մէջ գտնուած պետական  
մարդոց նախամեծարներէն ընտրուած  
էին : Շէրիֆ փաշան փորձառութիւն  
ունի, և իւրին չէ անոր տեղ ուրիշ  
մընտրել, թէպէտ և խոստովանեցաւ  
թէ Շէրիֆ փաշան ժողովրդական չէ :  
Թղթակցին ըսելով թէ կարելի է Նու-  
պար փաշան կանչել, Թէվֆիդ փա-  
շան պատասխանեց թէ կը ցաւի Նու-  
պար փաշայի դրկած հեռագրերին վը-  
նայ Եզիպտոս վերադառնալ : քանզի  
Նորին Բարձրութիւնն առ այժմ՝ ա-  
նոր վերադարձն օգտակար չդատե-  
րեալ Թէվֆիդ փաշան իւր իսկ ան-  
փորձութիւնը չծածկելով ըսաւ թէ  
երկտասարդ պաշտօնատարը տակա-  
ւին փորձառութեան պէտք ունին,  
թէ Եւրոպացի նախարարը չեն կրնար  
գործածուիլ, քանզի այս բանը մեծ  
սխալ մը կրկնել է : Թէ պէտք է որ  
անընթեք իրեն վստահին և ժա-  
մանակ տան, այն ատեն կրնան տես-  
նել թէ Եզիպտոս որչա՞ր պիտի յա-  
ռաչուի : Իսկ եթէ ինք չյաջողի և  
Ֆէլլահները գոհ չլինին, Եւրոպացի  
նախարարը կամ ուրիշներ կրնան զը-  
կուիլ : Կարելի է Եւրոպացի պաշա-  
նատար գործածել իբրեւ քարտուղար  
կամ խորհրդական, բայց ոչ իբրեւ  
խարար : Խորվը նախկին Եւրոպացի և  
հասարակային շինութեան նախարար  
Պ. Պ. Վիլլընի և Պլինիէրի վերադար-  
ձին ալ հաւանութիւն չտուաւ : «Եթէ  
յարեց, տէրութիւնը պնդեն, թող  
պիտի տամ որ այդ Պարոններն է-  
զիպտոս վերադառնան, իբր անձ-  
նակն բարեկամ զանոնք պիտի ըն-  
դունիմ և իբր խորի իրենց պիտի  
օգնեմ, բայց իրենց վերադարձին  
գէ՛մ կը բողոքեմ իբր քաղաքական օր-  
խալ մը, և ապր հետեւանաց պատաս-  
խանատուութիւնը չեմ կրնար ընդու-  
նիլ : »

Իորտ Սալիսպըրի խմայիլ փաշա-  
յին փոփոխութիւնը պահանջելու հա-  
մար Եզիպտոսի յուր վարչութիւնը  
պատճառ ցոյց տուած էր : Արդ՝ Թէվ-  
ֆիդ փաշան կը պահանջէ որ Եզիպ-  
տոսի վարչութիւնը բարեփոխու հա-  
մար իրեն և Եզիպտոսի ժամանակ  
տրուի, մանաւանդ Եւրոպացի նա-  
խարարը չլրկուին : Իսկ Եւրոպիոյ  
աշխարհավարութիւնը տակաւին բա-  
ցայայտ չէ :

Նախկին խորի խմայիլ փաշային  
գալով, տակաւին Նաբոլի է : Կրտու-  
թէ իւր Եզիպտոս վերադառնալուն  
չեն հաճիր Գաղղիա և Սնդղիա : Իսկ  
Թուրքիոյ մէջ բնակելու համար ալ  
գեւա հրաման չընդունեց :

Հեղինակն ինքիւր կը ծածանի  
և հաւանական է որ տակաւին լու-  
ծում գտնուի մօտ չէ : Կ. Պոլսէն  
Եւրոպական դեռ պահանջ ուղղեալ հե-  
ռագիր մը կըսէ թէ Բարձր. Սաֆ-  
վէթ փաշան Գաղղիոյ դեսպանին հետ  
խօսակցութեան մը մէջ ըսեր է թէ  
Վեհ. Սուլթանն այս խնդրոյն նկատ-  
մամբ վերջնական որոշում տուած էր  
յայտարարելով իրեն թէ չկրնար թո-  
ղու որ իւր անձնական արժանապա-  
սութեան և իւր տէրութեան դէմ  
ճնշում ի գործ դրուի, թէ վստահ  
է որ իւր իշխանութեան և իրաւանց  
պաշտպաններ կան Եւրոպական տէ-  
րութեանց մէջ : Իբրեւ բացատրու-  
թիւն այս յայտարարութեան՝ կըսուի  
թէ քանի մը շաբաթ է ի վեր Հեղե-  
նական պահանջմանց նկատմամբ Բ.  
Դրան և Բեդրասպուրի Օսմանեան  
դեսպանատան միջև հեռագրական  
թղթակցութիւնը տեղի կունենային,  
և վերջին հեռագրի մը վրայ Նորին  
Վեհափառութիւնն այս յայտարա-  
րութիւնն ըրեր է : Բայց Աժան հա-  
վասի մէկ հեռագրին այս խօսակցու-  
թիւնը սուտ կը հանէ : Միւս կողմէն  
Բորէսպոստան Բոլիթի լրագրին խօս-  
քին նայելով, Հեղեղական երկրորդ-  
թումբէր Պ. Պրայիլա թէպէտ հըրդ-  
պարակաւ կը յայտարարէ թէ Յու-  
նաստան չկրնար Եանեան թողուլ,  
բայց Պ. Ֆուրնիէ ըսեր է թէ Թեսա-  
լիոյ կողմէն ընդարձակ փոխարինու-  
թեամբ մը Հեղեղացիք կրնան դոհ  
լինիլ : Պ. Պրայիլա կը խոստովանի ե-  
ղեր թէ Թուրքիոյ հետ պատերազ-  
մին Յունաստանի ալիտաբեր է : Բայց  
եթէ Օսմանեան կառավարութիւնը  
Պէրլինի գաշնադիրը գործադրելով  
թողու որ Հեղեղք իրենց արուած  
դաւառները գրաւեն, Ալպանիացեաց  
գիւրաւ կրնան յաղթել : Այս խօսքն  
ևս կրնայ նշադարձութիւն մը հա-  
մարուիլ : Պ. Պրայիլա՝ Պ. Ֆուրնիէի  
հետ խօսակցութեան մը մէջ յոյս  
յայտներ է նաեւ որ եթէ պատերազմ  
լինի, Գաղղիա Յունաստանի կ'օգնէ :  
Բայց Գաղղիոյ դեսպանն այսպիսի հա-  
ւանականութեան մը նպատակաւ չէր  
ուստի և յայտարարեց թէ Գաղղիոյ  
իւր զորականաց արեւնը կը խնայէ,  
ինչպէս Պ. Պիամարը իւր Բամբանիա-  
յիներուն արեւն խնայող է : Արդ-  
չեմք դիտել թէ Հեղեղացիք պղծա-  
տնական օգնութեամբ ի՞նչպէս կըը-  
նան յուսալ իրենց պահանջումներն  
յառաջ տանիլ : Պ. Վատրինկոն ի-  
տալիոյ արտաքին գործոց նախարա-  
րին յայտարարած է Եզիլ թէ Գաղ-

ղիա Յունաստանի համար պատերազմ  
չպիտի ընէ, բայց կը յուսայ որ բոլոր  
Եւրոպական տէրութեանց մէջ ա՛յն-  
պիսի համաձայնութիւն մը պիտի հաս-  
տատէ, որով Բ. Դուռը պիտի հաւա-  
նի լուծել այս խնդրին : Ինչպէս կը  
տեսնուի, անոնց ամենն ալ պարզ են  
թաղութիւնը են :

Թայմիլ լրագրոյն Կ. Պոլսոյ թըղ-  
թակցիւր օգոստ. 15 թուով քաշած  
հետեւեալ հեռագիրը Թուրքիոյ մէջ  
կառավարական գործոց ընթացքին  
վրայ հետաքրքրաշարժ տեղեկու-  
կութիւններ կը պարունակէ, որոց  
հզուցութիւնը բնականաբար չկրնար  
երաշխարել :

Սմեն դատուց մէջ ընդհանուր  
համադրումն այս է որ արդի նախա-  
րարութիւնն առ ժամանակեայ է, և  
նախարարական կարևոր փոփոխու-  
թիւնը կ'ապառնին ի մօտոյ : Այդ-  
փոփոխութիւնը արքան շուտով ինին,  
այնքան լաւ է. որովհետեւ ներկայ  
ժամանակին պէս տաղնապալից ժա-  
մանակ մ'աղբու նախարարութիւն  
մ'անհրաժեշտ է, մինչդեռ արդի նա-  
խարարութիւնը լաւ կադմութիւն մը  
չունի : Խայրէտալին փաշային գործէ  
քաշուին և Գալաթիէն փաշային  
պաշտօնակցութիւնը վայրկեանապէս  
խաղաղեցին դատութիւնները : Բայց  
գալութեան բողոքում տարերք թա-  
քուն վիճակի մէջ կը մնան, և առա-  
ջին նախարար Սըրիֆի փաշան թէ և  
խիտ տատառւոր անձ մ'է և բարի  
գիտաւորութեանց տէր, այսու ամե-  
նայնիւ թող ընտրութիւն ունի :  
Դեռ յայտնի չէ թէ ո՞վ պիտի լինի  
անոր յաջորդը : Ընդհանրապէս կը  
կարծուի թէ Սաֆվէթ փաշան պիտի  
լինի : Բայց ամենք՝ լաւ տեղեկութեանց  
վրայ յենլով՝ կը կարծեն թէ Խայրէտ-  
ալին փաշան վերստին պաշտօնի պի-  
տի կաշուի՝ եթէ ոչ իւր առջի գրից  
մէջ չ'գոհնէ իբրեւ մեծ աղբեցութիւն  
ունեցող անգամ նախարարաց խոր-  
հըրդին :

Այս վերջին երթագրութեան ի  
հաստատութիւն, ինչ ինչ հետաքրք-  
րական իրողութիւններ յիշել կարե-  
լի է : Տան օրէ ի վեր է որ նախորդ  
Մեծ-Եպարքոսը կրկին և կրկին եր-  
կայն տեսակցութիւններ ունեցաւ  
Սուլթանին հետ և աւելի հանդարտ  
կերպիւ անոր հետ վիճարանութիւն  
ըրաւ այն կարեւոր խնդրոց վրայ, որը  
նախարարական վերջին տաղնապիւն  
պատճառ եղան : Այս տեսակցու-  
թեանց միոյն միջոցին՝ բուռն վիճա-  
բանութիւն մը տեղի ունեցաւ Խայ-  
րէտալին փաշային և Շէյխ-Իս-Է-Խա-  
ւամին միջև՝ իսթամպոյլ այն հաշակա-  
ւոր սրտման նկատմամբ, որ իբրեւ  
պատրուակ գործածուեցաւ Խայրէտ-  
ալին փաշային առաջարկած բարենո-  
րոգ մանց ծրար իբր մեթոքու համար :

Խայրէտալին, որ ճարտարախօս անձ  
մ'է և խաւաութեան սրբազան օրի-  
նաց ամեն փափուկ կէտերուն խիստ  
հմուտ է, իւր ընդգիմախօսէն աւե-  
լի զօրաւոր փոստեր յառաջ բերաւ :  
Բայց երեք կէտերու վրայ Սուլթանն  
յայտնեց թէ դոհ չէր և աւելի բա-  
ցատրութիւն կուղէր : Ուստի Խայ-  
րէտալին փաշան երկար պատճառա-  
բանութիւն մը խմբադրեց, և անց-  
եալ գիշեր Վեհ. Սուլթանին հետ ու-  
նեցած տեսակցութեանը միջոցին,  
որ դարձեալ երկար տևեց, Ն. Վե-  
հափառութեան մօտոյց :

Վիճարանութեան ներքեւ գըտ-  
նուող գլխաւոր կէտն այն էր թէ Խայ-  
րէտալին փաշային բարենորոգմանց  
հիմնադրին մէջ բացատրուածին հա-  
մեմատ՝ Մեծ-Եպարքոսին ունենա-  
լիք գիրքն ու պաշտօնը մինչև ո՞ր տա-  
տիճան համաձայն էին Շէրիֆի ըս-  
կըրանց : Կը յիշուի որ իւլէմայք ո-  
րոշած էին թէ Խայրէտալին իշխանու-  
թիւնը տեղակալի այսինքն նախարար-  
րի մը յանձնուիլն այդ անփոփոխե-  
լի սկզբանց հակառակ կը լինէր : Խայ-  
րէտալին իւր կողմէն կը պնդէ որ այդ  
որոշումն եթէ այն խնամտով առնուի  
թէ Սուլթանն իւր աշխարհական իշ-  
խանութեան մէկ մասը չկրնար աւե-  
լի տակալի մը յանձնել, յայնժամ առջի  
Խայրէտալին ընթացից, ինչպէս նաեւ  
որդայան օրինաց ամենէն յարգի վար-  
դապետներուն հեղինակութեան հա-  
կառակ կը լինի : Կը մնայ տեսնել  
թէ Սուլթանն այս տաղնապիւնով պի-  
տի համադրուի՞ արդեօք :

Սուլթանին վերստին այս խըն-  
դելը բանալն ինքնին հետաքրքրա-  
կան է, և Ն. Վեհափառութեան գի-  
տաւորութեանցը նկատմամբ այլ և  
այլ կարծեաց տեղի տուած է : Գոր-  
ծոց ընթացից վրայ լաւ տեղեկութիւն  
ունեցող ոմանք այս կարծիքն ունին  
թէ Սուլթանն արդէն փորձով հա-  
մադրուած է որ վերջերս կատարուած  
նախարարական փոփոխութեանը  
խալ մ'էր, և տէրութիւնը՝ տոկոբա-  
կան նախարարաց կատարելու անկա-  
րող եղած արժանապաւն գարմանե-  
րով միայն կրնայ փրկուիլ : Ուստի,  
սա հետեւութիւնը կը հանեն որ Խայ-  
րէտալին փաշային հիմնադիրը՝ կամ  
իւր առջի վիճակին մէջ և կամ թէ  
թէ բարեփոխութեամբ պիտի ըն-  
դունուի, և նախկին Մեծ-Եպար-  
քոսն իւր պաշտօնին մէջ վերահաս-  
տատի : Ոմանք ալ կըսեն թէ Սուլ-  
թանը պարզապէս համադրուած է Խայ-  
րէտալին տուած բացատրութիւննե-  
րէն, և կուղէ արդարութեան գործ  
մ'ընել անկեղծ նախարարը պաշտօնի  
կոչելով : Թէ և այս կարծիքներն  
յայտնող անձինք լաւ տեղեկութիւն  
ունին, այսու ամենայնիւ վերջին ա-  
ւուրց մէջ ոչինչ պատահեցաւ, որ  
կարենայ իբրեւ նշան համարուիլ կա-



այն Հայք, որք թրքուհի մ'առեւ-  
ւանգող Հայու մը 'ի պաշտպանու-  
թիւն վարուած լինելու կարծիքա-  
կան ամբաստանութեան մը տակ կը  
ձգուին նոյն իսկ թրքերու կողմէն :

Ոչ նուազ հետաքրքրական է սոյն  
դէպքը որ տեղի ունեցաւ աստ, ըմ-  
պերի դայիմագամ Դաւիթ Հայե-  
րէն ամբաստանութեամբ 'ի Կարին 'ի  
գաւտ կոչուեցաւ, ուր տեսնելով որ  
պիտի պարտաւորի և միանգամայն  
հաստատուելու վրայ է ոչ թէ միայն  
իւր Հայոց վրայ ըրած խժգժական  
հարստահարութիւններն, այլ և իւր  
արքունի գանձէն ըրած գողութիւն-  
քը, 300 ոսկի կը խոստանայ հարցա-  
քննիչ Էֆենտիին որ զինք արդարա-  
ցընէ, որմէն և կը հաղորդուի Եւ-  
ստֆ վաչայի, որոյ տուած գաղտ-  
նի հրահանգին համաձայն որոշեալ  
պահուն երբ հարցաքննիչ Էֆենտի  
սենեկին մէջ 'ի ներկայութեան նոյն  
իսկ Դաւիթ Հայերի իւր եղբայրն ոսկի-  
ները կը համբէ, դարակին (Եւստֆի) մէջէն երկու անձ ելնելով «չէն կե-  
նաք, ալ բաւական է» ըսելով կը  
ձեռքաւորեն և կը բերեն աս Եւս-  
տֆի փաշայ, որմէն ոսկիներով հան-  
դերձ կը զրկուին տու վալին, որ և  
անմիջապէս կը բանտարկէ :

Բայց զարմանալին այս չէ. Կար-  
նեցի . . . . . Թուրք պաշտօնեայ-  
ներ՝ որք 'ի սկզբն սատարի պաշա-  
պան էին այս անձին, որք և հակա-  
ռակ տեղութեան այն օրինաց՝ որ  
կարգիլէ տեղացի անձերու Գայիմա-  
գամ և Միւսիք լինել, զսա, ըմ-  
պերի լինելովն հանգեծ, Սպերու  
Գայիմագամ ըրած էին, նկատելով որ  
իրենց պաշտպանեալը խայտառակ-  
ւեցաւ, այժմ պաշտպանել կը ճըդ-  
նին առարկելով թէ որովհետեւ ու-  
կիններ համարը եղբայրն է եղած և  
ոչ թէ Դաւիթ Հայեր, ուստի պէտք չէ  
որ մի և նոյն պատիժը կրեն երկու-  
քին :

Անգղիոյ հիւպատոսը միշտ կը  
տեսնուի Տ. Վահան վարդապետի  
հետ, կերելի թէ սոքա Հայաստանի  
ծառայութիւն մ'ընելու կը փախա-  
րին : Կը կարծուի թէ հիւպատոսն  
իւր կառավարութեան և վարդապե-  
տը Պատրիարքարանի գրած են թէ  
տուանց Եւրոպական խառն լիազօր  
շանձնաժողովոյ մը կարելի չէ յա-  
նուն վերականգնութեան այս երկ-  
րին՝ ու և ձեռնարկութիւն : Իցիւ  
թէ 'ի դարձ գրուէր այդ առաջար-  
կութիւնն, և ազատէր Հայաստան  
իւր արգի տխուր վիճակէն :

ՀԱՅԿ

ՊԱՐՍԿԱՆԱՅԻՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿ

Չմեռն է, հիւսիսային ցուրտ հող-  
մերն կը փչեն, Պարսկաստանի լեռը  
ձորը, դաշտը, ճերմակ ձիւնը պա-  
տած է սպասում է Գարնան. հորի-  
զոնն ամպամած է, նորա արշալոյսը  
դեռ չէ ծագեր, կը խորդայ հանգիստ  
Պարսկահայր ծանր քնով, եղը, խո-  
փը, արօրը հանգիստ են, նմանա-  
պէս մշակը հանգիստ է, այո՛, Տաճ-  
կաստանի Հայ մշակէն. ազատ է, ա-  
յո՛, բարբարոս Բիւրդէն և Չէրքէ-  
դէն, ազատ զինուորներէն և զինուո-  
րական սուրբերէն, պատապարտած  
է տաք գոմերում, նմանապէս ամեն  
մարդ չեւր սենեկում զբաղած է իւր  
առօրեայ դորձերին, բայց իւրեան  
մի ժառանգութիւն է մնացած նախ-  
նեացմէ, որ է չլիշել իւր ազգայն,  
իւր գրեական և իւր ազգը, նոյն ու-  
սումը և յառաջդիմութիւնը. սոցա  
կարգում էի և ես, սակայն ուսում  
նական ընկերի չնորհիւ և նորա ըս-  
տիպամբ լրագիրներ կարդալով նո-  
ցա քաղցր ճաշակն վայելեցի և ո-

րոյ միջոցաւ մեր ազգային ընդհա-  
նուր վէրքերը, նորա տխուր և ուրախ  
օրերը վսեմ կամ համբալի գրուած-  
ներով մերթ ընդ մերթ իրեն դիտա-  
ւոր աստիճան մեղ կերակրին, տե-  
սակ տեսակ ճառերի, տաւերախոսու-  
թիւնների, թարգմանութիւնների,  
բանաստեղծութիւնների մէջ դեղե-  
րելով՝ ընտիր գրիչներէ նիւթ հա-  
ւաքելով՝ գրականական սերն իմ ար-  
տումն այնքան արժարժեց, մինչ ըս-  
կըսաւ իմ մէջ գոյանալ յօգուածներ-  
րի կամ բանաստեղծական գրուած-  
ների ձեռնարկութեան ձգումով ու-  
ստի կողմէն Պարսկահայոց արդի-  
վիճակն նկարագրել ըստ իմ կարեայ-  
սակայն արդեօք ինչ ներկայացնեմ  
ընթերցողին. ո՛ր կողմ կը նայեմ իւր-  
ըն խթաններ իմ սիրտս կը խոցեն  
մեր նախնեաց կոչա, կոպիտ և նա-  
խանձառ արարքն : Երբ Պարսկահա-  
յոց վրայ է խօսքն, ուղիղ խօսելով՝  
պիտի տեսնենք թէ ինչ ներդրութիւն  
որ մեր ազգը կրեր է Պարսկաստան,  
իւր անկիրթ և նախանձառ բնութե-  
նէն, իւր համազգային վաստակներէն  
և Մէրուսաններէն է կրած, և կամ  
անտիղթ և ծոյլ է եղեր իւր դուր-  
ծում, Պարսից թագաւորներն (բա-  
ցառութեամբ միայն) ամեն կերպով  
մեղ վերայ միշտ հայրական դուրս և  
սէր են ունեցեր մինչև օրս. արդեօք  
մեր ազգն տէրութենէն իւր ազգա-  
յին խնդիրներն մտաին ինչ թերու-  
թիւն է տեսած, ազգի բարեկեց հա-  
մար ինչ են ուղեցրեր մեր նախորդ-  
ներն և տէրութիւնն չէ տուեր. ո՛ր  
թեմակալ առաջնորդը իւր վիճակի  
համար բողոքներ, ազգի խնդիրներ  
և ժողովուրդին բարօրութիւններ  
խնդրեր է և անդորձաբերելի է մը-  
նացեր. երբ իւրեանք ծոյլ են եղեր  
և անտիղթ իւրեանց ազգային դուր-  
ծոյ մէջ, յանցանքն ո՛ւմն է. ե՛րբ  
ուղեց մեր ազգն եկեղեցի, վարժա-  
րան կամ ընթերցարան շինելոյ և  
արգիլեցին զինքն կամ չօգնեցին.  
ե՛րբ ուսմանքն յառաջարկեց կամ  
տպարան հաստատեցինք՝ և նոքա  
արգելք եղան մեզ, ե՛րբ վարժա-  
րանի հարցաքննութեան հրահրե-  
ցինք՝ չեկան կամ չպատուեցին մեզ  
Ժամանակաւ թէհրանում առեւ-  
տըրական գործառնութեանց և ար-  
հեստներին մէջ Հայերն մեծ դեր էին  
կատարում : Ինչ չարութիւններ չարե-  
ցին միմեանց դէմ Ասածներն բա-  
ցատրութիւն տալը համար թողով  
անցեալներն, 'ի նկատի առնելով մեր  
գարի մէջ թէ՛ լսածներս և թէ՛ տե-  
սածներս. թէ և օգուտ չունին այ-  
ժմ քանզի անցեալն էանց, բայց  
կարելի է մի զգուշութիւն կարողա-  
նան լինիլ մեր ապագայ սերունդին  
և մի տեղեկութիւն մեր հեռաւոր  
ազգայնոյ, որք կը ցանկան իմանալ  
Պարսից խորքերում Հայոց պատա-  
հած դէպքերն :

Գիտաւորութիւնս այս իմ համ-  
բալի գրուածովս իբրեւ գրագէտ հը-  
րապարակ ելնել չէ, այլ կողմ  
Պարսկահայոց՝ ուսումնականների, նա  
մանապէս նորուս երիտասարդաց  
սրտերին մէջ բարի նախանձառ զգա-  
ցումներ յարուցանել, և հասկացնել  
նորանց թէ ինչպէս մի նախապատ-  
րաստ մարդ ինչպէս ես եմ, կը կա-  
րենայ 'ի նորոյ ուսմանք սովորելով՝  
հրապարակ ելնել. ուրեմն մարդոյն  
համար իւր դորձոց մէջ անկորելի  
րան չկայ, միայն ջանք և յարատե-  
ւութիւն պէտք է : Թէհրանու Հ.  
վարժարանի յառաջդիմութեամբ աշակերտ-  
քն կը հրաւիրեմ որ հետեւին օրի-  
նակիս, իւրեանց սովորած ուսմանքը  
անդորձունեութեամբ չկորուսանեն,  
թէպէտ և բարձր ուսմանք սովորե-  
լոյ համար երկար ժամանակ է հար-

կաւոր լինում, որով արհեստ սովա-  
րելոյ ժամանակն անցանում է, բայց  
փոխուեցաւ այժմ հին դարաւար-  
նէրն. քանզի կը տեսնենք որ ուսում  
նականներն հազար օր անդորձ լինին  
դարձեալ տղէտ հարուստէն լաւ են :  
Առած է կասեն « երեսով քարն հո-  
ղի տակ գնար » :

Այս իմ գրած տեղեկութիւնս  
երկար լինելոյն պատճառաւ չորս  
մասնի վերածելու պարտաւորեալ  
գտայ զիս, որոյ ամուն և կը դնեմ,  
Չմեռն, Ամուն, Գարուն, Աշուն :

Պարսկահայոց արդի վիճակ

Ամունային տօթ օրերում, երբ Այ-  
լահը լըլը խանի 52 ականի կամուրջին վե-  
րայ հասնի մարդ, Չայէնտէրուտի խոխո-  
ջիւն և կանաչադարձ ծառերի մեղմա-  
հնչիւն խնայողք կ'զգայեցնեն նորա  
սիրտն, գետի հարաւային եղեղաց վերայ  
կիսաբլուրակի չրճանակում կը տեսնէ նոր  
Ջուղայի դիրքն, որոյ կանաչադարձ  
խառն ծառերի մէջէն բարձրացած կ'ե-  
րեւն գէպի վեր գմբէթներ և մի տեսակ  
կոնաձե կաթողիկէներ, ինչպէս նա և  
Ամենափրկչեան սուրբ վանուց դիրքն  
իւր շքեղ տեսարանով :

Կամուրջը անցնելէն յետոյ առաջին  
անգամ Ջուղու արտերի և պարտէզների  
միջէն պէտք է անցնի Դաւիթմանեանց  
լայն բայց աւերակ պողոտայն, որոյ եր-  
կու կողմաց վերայ բարձրացած կան-  
դեռ ևս հողեայ սրտեր և դրանց մեծ  
և չքեղ ճակատներ տուանց փողիկերի,  
մերձ 20 եկեղեցիներ, ումանք կանդուն  
և ումանք կիսափորձան, որոց չորքն ա-  
ւերակի բեկորներ, բանջարեղանայ ար-  
տեր կամ ցանքեր չրճապատած են այ-  
ժմ, թէպէտ և առաջ ամբողջ տներով  
ծածկուած են եղեր : Քսան տարւոյ չափ  
յառաջ երեւելի էր Անայի զարը (գըղ-  
եակը) կիսաւերակ, որոյ ստորին յարկը  
մնացած է այժմ այդ արտերի և այգի-  
ների մէջ կանդնած : Բնդհանրապէս  
Ջուղու հին տանց սենեակներն կամարա-  
կապ են հաստահանի պատերով, և այս  
սենեկաց մեծ ընդարձակութեանը պատ-  
ճառաւ է կարծեմ, գեղեցկապէս յօրին-  
ւած ուսուցիչի ծաղիկայ չրճանակներով.  
սորանցից երեւելի տեսակներն թէ չեն և  
թէ աւերակ չիւնաւածոյ մէջ կ'ըմբարուի  
դեռ ոսկեղօծ և զոյնզոյն զարդարուած,  
որոյ նմանն այս նոր տարիներս սկսեցին  
թէհրան ևս չիւնալ. նոցա ոսկեքն մինչև  
ցայժմ քերէն Հրէայք իւրեանց շահա-  
խնդրութեան մի նիւթ են դարձուցած.  
չատ երեւելի չէնքեր հիմնայտակ լինե-  
լով՝ անուններն են մնացեր միայն, որոց  
մի մասն Պարսից ձեռքն է անցեր. եր-  
կայն և լայն պողոտաներ կ'զանուին, որոց  
երկու կողմանց տանց հետքերն հաղիւ  
կ'ըմբարուին, թէ որ մարդ զգուշութեամբ  
քննէ այս տարածեալ աւերակաց և մը-  
նացորդ սքանչելի չէնքերին վերայ, ան-  
շուշտ պիտի մակարեթէ թէ նախկին Ջու-  
ղայեցիք որքան հարուստ և ճոխ են ե-  
ղած :

Այժմ ևս կան կանգուն այն երեւելի  
չէնքերէն և մեծ մեծ տուններէն մինը մի  
թալի այս ծայրը, միւսն միւս թաղի այն  
ծայրը ոսկեղօծ և կամարակապ սենեակ-  
ներով, մեծ մեծ պարտէզներով և ըն-  
դարձակ բակերով, երեւելի է իւր Ամ-  
ենափրկչեան վանքն, որ սքանչելի պատ-  
կերներ ունի ներքին պատերին վերայ,  
և եռայարկ և երկուստասան սենեց վերայ  
բազմաձ գեղեցկաչէն զանգակատնովն :  
Վոստանաց վանքն իւր Վոստանովն պահած  
ունի իւրեան նախնի կարգ և կանոնն.  
այժմ հաստատ 12 եկեղեցիք կան որ  
ժամերգութիւն կ'լինին մէջներն :

Նոր Ջուղու ունի երեք վարժարան.  
Ա. Հայկեան Մարդասիրական ձեռնարան  
'ի Պ. Յարութիւն Արքաւորեանէ. Բ. Գարոց  
Ս. Մինաս եկեղեցւոյ 'ի Մարիամ Յարու-  
թիւնեանէ. Գ. 'ի Պ. Մանուկ Յարգանեան-  
եանէ Վոստանաց վանքում հաստատեալ  
օրիորդաց դպրոցն, 20 ամ յառաջմանէ ըս-  
կըսեալ կ'ուսանին միւս մերձ 100 օրի-  
որդք, բայց սոքա անկարգ դրութեան  
պատճառաւ անպատեղ են մնացել մինչ  
ցարդ, և բարեբարաց այդ երեւելի յիշա-  
տակներն ու ազգի օգուտէս կը թարան-

ներն անբարեւոյր անձանց չնորհիւ աղօ-  
տացած են, վասն զի նոցա իրաւունք-  
ներն իւրաքանչիւր բարերար իւր ցեղին  
է յանձնել, ոչ Առաջնորդ, ոչ Քահանայ  
և ոչ այլ անձն կարող է նորա վերայ իշ-  
խել, և այն անձինքն էլ, որոնք ունին  
իրաւունք իշխելոյ, ինչպէս որ իրանց  
կամեն է՝ այնպէս կանեն, իբրեւ մի խա-  
նութ կամ մի պիտիտութեամբ իւրեանց  
անձնական շահուց կ'ծառայեցուցանեն.  
հոգ չէ սպանելու չեկաւ, ես մնաց կամ  
առաջ դնաց, միջոցեւ ինչքան հարկա-  
ւոր են ուսեալ անձինք, յորոցմէ քահա-  
նանք պատրաստեն վիճակների համար  
որ անկիրթ չլինին և ժողովուրդն չգայ-  
թակեցնեն. սակայն ինչ եմ ասում,  
ինչ օգուտ, որովհետեւ ուսեալ քահա-  
նայի ձեռնտու չէ վանքի կանոնադրու-  
թիւնն, ես ինչպէս տեսայ Տէր Եղիշէ  
դիտնական քահանայն, որ իբրեւ արքայ  
տարով Բասրայ յուղարկուած էր վիճա-  
կաւորէն, որպէս զի դադարի տնկարդու-  
թիւններն ընդ վարագուրի մասն և հը-  
րապարակ չեւնեն նորա գրչի միջոցան :

Թողնելք անցեալներն, 'ի նկատի առ-  
նելք Ս. Թադէոս եպիսկոպոսի չրճանն :  
Նոր հասաւ սա 'ի Ջուղայ, վանքն և ե-  
կեղեցիներն շատ անկարգ դրութեան մէջ  
էին, ոչ չիտ ունէին և ոչ օրինաւոր զգ-  
գեստներ. վանքն էլ Կաթողիկ Սմիթա-  
նի մօտ գրաւ էր դրուած հազար թու-  
ման փողի փոխարէն. նոյն միջոցին Վեհ-  
Շահն դնաց յԱստուհան և նորա հետ էր  
նաեւ Կեհայ Գոլորտը Ռուսաց դես-  
պանն, Ս. Առաջնորդը նորա ձեռնտուութե-  
թեամբն և իւր ունեցածովն թափեց  
դայն գրաւէ, ջանաց առկա վանքն և ե-  
կեղեցիներն միանգամայն հարստացնել,  
պայժառացեալ և բարեկարգել թէ՛ փողով,  
թէ՛ անօթեղէններով և թէ՛ լաւ զգեստ-  
ներով. նորա ժամանակին եկեղեցիներն  
ամենն էլ մեծ մեծ գումարներ ունեցան  
Հնդկաստան : Ամենափրկչեան պարտա-  
կան վանքն այն աստիճան հարստացաւ  
որ սինչ կարօտութիւն և պակասութիւն  
չունեցաւ ամենայն կողմանէ : Երեւելի  
մարդիկ և երեւելի ճանապարհորդներ  
միշտ պատահելով գոհ սրտով կը վերա-  
դառնային անտի. տեղեւոյ քաղաքա-  
պետներն և պաշտօնականներն միշտ կ'այ-  
ցելէին վանքն, և մեծ յարգ և պատուով,  
ընծաներով և շնորհակալութեամբ կը  
դառնային այն տեղէն. տեղեւոյ իմաւ-  
ջումայն և Առաջնորդն մի այնպէս բա-  
րեկամական սէր էին կապած միմեանց  
հետ, որ զմիմեանս եղբայր կ'ըզէին : Չը-  
հարմար Հայոց ազգային խնդիրների  
պատճառաւ՝ այն կողմի լուս և Բաղդա-  
սարի կոչումը մեծամեծաց մօտ այնպիսի  
մի վեհանձնութիւն էր ցոյց տուած, որ  
ամենքն էլ կ'երկնչէին նորանէ և սիրով  
կ'իստարէին նորա բոլոր հրամաններն.  
նորա մեծագործութեանց նկարագրու-  
թիւնն Ջուղայու բարեօրոտ անձանց կը  
վերաբերի որ չթողուն ընդ փողով մնայ,  
զոր կարելի է մի բարերար կոչել Ջու-  
ղայու :

Հեղեւել Խոսով

Ի Լ Ա Ն

Նկարավայել ելլիս անպարբնա միւ-  
պայեա օրւնաճաղը Էփէյն իւան օ-  
րւնան մալում իւլ մըքտար ինկիւ-  
թէրա նէֆեր չուհալըն շուրթիւր  
մուգարբերէի իլէ պէհեր մէթրօր  
օն աօքուղ զրուշ օթուղ պէշ փա-  
րայա թալիպի էօհտէսինտէ օրուպ  
աղօթիօս րումինին իլիլմի իւրինճի  
չհարչէնպիհ իլինի թէքրար միւ-  
նադասար իճրա օլունաճաղընտան,  
իթաւընա թալիպ օլունըրըն եկվի  
մէշքիւրաէ Տարը Շուրայի տաքերի-  
յէ կէլլէլէրի :

18 աղօթիօս 1879

Պապը Սէրասքերի

Խալը ճէալիտ պաթալ քեաղըր  
թօփ 200, պ

